



05/12355-17
1/06/10212-17


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1090

« Օձ » 10 201 7 թ.

ք.Երևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 534-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի
Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ
հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի
2017 թվականի մայիսի 16-ի <<Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարության էթիկայի հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի
Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի

14-ի N228-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»» թիվ 534-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 1-ին կետում <<Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ>> բառերը փոխարինել <<<< ԱԻՆ աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության պետ>> բառերով.

2) հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում <<զնդապետ>> բառը փոխարինել <<գեներալ-մայոր>> բառերով.


3) հավելվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<4) Տիգրան Ղարիբյան- ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ>>.

4) հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետը հանել:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

A handwritten signature in black ink is written over a grey, diamond-shaped official stamp. Below the signature, there is a small logo consisting of a stylized 'S' inside a circle, followed by the word 'Sign'.

Դ. ՏՈՆՈՅԱՆ